



ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ »	ՀՈՂԱԾՄԵՐ	ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ	ԱՆՀԱՍՆԵՐ »	ՀԱՅԿԱԿԱԼ ՍՓՅՈՒՌ »	ՏՈՒՍՅՈՒՅՑ »	ԱՅԼ »
-----------------	----------	----------------	------------	-------------------	-------------	-------

05/11/2014 | [Հարցազրույցներ](#) | [No comments](#)

## «Ամենից կարևորն ու տպավորիչը «Անի» համույթի հայկական ոգին ու շունչն էր...»



Օրերս Երևանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հրավերով Հայրենիք էր ժամանել ՌԴ Դոնի Ռոստովի մարզի հայաշատ Մյասնիկյանի շրջանի Չալդըր գյուղի «Անի» ազգագրական համույթը, որը հյուրընկալվեց նաև ՀՀ սփյուռքի նախարարությունում:

Համույթի ծավալած հայրենանվեր գործունեության մասին «Հայերն ալթը»-ի թղթակիցը զրուցել է Երևանի պետական համալսարանի Հայագիտական

հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Միեր Հովհաննիսյանի հետ:

- Պարո՛ն Հովհաննիսյան, ԵՊՀ-ն հայտնի է որպես լավագույն միջոցառումների հեղինակ, ավանդույթների շարունակող: Վերջերս Մայր բուհը հյուրընկալել էր Դոնի հայերի «Անի» համույթին. ինչպե՛ս և ե՛րբ են ձևավորվել Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի և Դոնի Ռոստովի «Նոր Նախիջևան» հայկական համայնքի բարեկամական կապերը:

- Սկսեմ արմատներից. ԵՊՀ-ի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, որը ստեղծվել է 2008-ին, բացի հայագիտական հետազոտական աշխատանքներ իրականացնելուց, իր հիմնական խնդիրներից մեկը դարձրեց այդ հետազոտություններն այս կամ այն ձևաչափով կապելու Սփյուռքի ավանդական և նոր ձևավորվող հայկական գաղթօջախների հետ՝ նպաստելու նույն այդ համայնքներում հայապահպանության խնդիրների լուծմանը: Երկու տարի առաջ, ԵՊՀ-ի ռեկտոր Ա. Միմոնյանի հետ համաձայնեցնելով (նա նաև մեր Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրենն է), ես սկսեցի մի ծրագիր, որի համաձայն մեր ինստիտուտն սկսեց աշխատել համագործակցել երկու հիմնական Լիբանանի և Դոնի Ռոստովի հայկական համայնքների հետ: Այս տարիների ընթացքում մեր առջև խնդիր դրեցինք կա՛մ աջակցել տեղերում ձևավորված հայագիտական կենտրոնների աշխատանքներին, կա՛մ համատեղ ստեղծել նմանատիպ կենտրոններ: Դրանցից մեկը և առաջինը դարձավ Դոնի Ռոստովի հայագիտական կենտրոնը, որի հետ որոշեցինք փորձել իրականացնել գիտական հետազոտություններ, ինչպես նաև՝ համայնքի տարբեր կրթամշակութային կառույցների հետ գործընկերային զանազան ծրագրեր: ՌԴ գիտությունների ակադեմիայի Հարավային գիտական կենտրոնի սոցիալ-տնտեսական և հումանիտար հետազոտությունների ինստիտուտը 2014թ. սեպտեմբերի 18-19-ին կազմակերպել էր միջազգային գիտաժողով՝ «Կազակներն ու լեռնականներն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» խորագրով: Այդ համաժողովին մասնակցում էին նաև մենք. ելույթով հանդես եկավ ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Միմոնյանը, զեկույցով հանդես եկա նաև ես: Այդ օրերին այցելեցինք Դոնի Ռոստովի տարբեր շրջաններ (մինչ այդ ես գրեթե չորս անգամ եղել էի հայկական բնակավայրերում՝ նախադրյալներ ստեղծելու նպատակով), եղանք հայաշատ Մյասնիկյանի շրջանում, հանդիպում ունեցանք շրջանի ղեկավար Արշակ Պոբկեյանի հետ: Այցելեցինք նաև Չալդըր գյուղում տեղակայված Նոր Նախիջևանի հայերի թանգարան, հնարավորություն ունեցանք տեսնելու «Անի» համույթի կատարումները և ծանոթանալու նրանց ծավալած հայրենանվեր աշխատանքներին: Ոգեշնչված համույթի տպավորիչ ելույթով՝ ԵՊՀ ռեկտորը համույթին հրավիրեց՝ համերգային ելույթներով հանդես գալու Հայաստանում: Այսպես սկսվեց «Անի» համույթի մեր բարեկամությունը:

-Ո՞վ հոգաց համույթի ճամփորդության, կեցության ծախսերը:

-Ճանապարհաձախսն ամբողջությամբ հոգաց Մյասնիկյանի շրջանի ղեկավարությունը, իսկ կեցության և մնացած բոլոր ծախսերն իր վրա վերցրեց Երևանի պետական համալսարանը: Համույթի կազմին

տեղավորեցինք համալսարանի Հյուրերի տանը:

-Քանի՞ համերգ ունեցավ համույթը և ինչպիսի՞ արձագանքներ եղան:

-Հոկտեմբերի 28-ի երեկոյան համույթը ժամանեց Երևան: Նախատեսված էր երեք համերգ, որոնցից առաջինը պիտի կայանար և կայացավ Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում, երկրորդը նախատեսված էր ԵՊՀ-ում, սակայն, ցավոք, այն չկայացավ դժբախտ պատահարի պատճառով՝ մեր ուսանողներից մեկն էր մահացել համալսարանում. մենք ստիպված եղանք արագ կողմնորոշվել և խմբի համերգը տեղափոխեցինք Արտաշատ քաղաքի երաժշտական դպրոցի դահլիճ: Երրորդ համերգը կայացավ Իջևանի մշակույթի տանը, որը կազմակերպել էինք Իջևանում գտնվող մեր մասնաճյուղի հետ: Ընթացում է, համալսարանում խումբը ելույթ է ունենցում, սակայն առաջին համերգի օրը՝ «Առնո Բաբաջանյան» համերգասրահում, մեր բուհի ուսանողներից շատերն էին ներկա: Երեք համերգների ընթացքում էլ դահլիճները լեփ-լեցուն էին, ծափահարությունները բուռն էին ու չդադարող: Ասեմ, որ համերգների մուտքն ազատ էր, տոմսերի վաճառք չկար, չկար ուսանողության ներկայության պարտադրանք: Մինչ համերգները մենք տպագրել էինք 30-ից ավելի գունավոր ազդագրեր, քաղաքով մեկ տարածել էինք փոքրիկ ծանուցագիր-թերթիկներ, կայանալիք համերգների մասին լրատվություն էինք տեղադրել նաև համացանցում: «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցած համերգին ներկա էին նաև Վազգենյան հոգևոր դպրանոցի սաները, հոգևորականներ, ներկա էր Չալոբրի հոգևոր հովիվ տեր Թադևոսը, ում զավակը նույնպես սովորում է Վազգենյան դպրանոցում: Ինքս էլ իմ ընտանքով ներկա էի և պետք է ասեմ, որ շատ մեծ բավականություն ստացա: Չլինելով արհեստավարժներ՝ համույթի անդամներն, այնուամենայնիվ, շատ բարձր մակարդակով ներկայացան հանդիսատեսին: Անչափ տպավորիչ էին «Անի» համույթի ներսում գործող «Դեմո-գունա» խմբի կատարումները: Համույթի գեղարվեստական ղեկավար, միջազգային մրցույթների դափնեկիր Գրիգորի Խաթաբյանի և Համառոտաստանյան երաժշտական միության վաստակավոր գործիչ Վարսենիկ Բայանի, «Դեմո-գունա» խմբի ղեկավար Ա. Դադլյանի ղեկավարությամբ համույթի անդամները դրսևորեցին բարձր պրոֆեսիոնալիզմ:

-Համույթն առաջին անգամ էր Հայաստանում:

-1985-ին Ռոստոմի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Գրիգոր Խորդանյանի կողմից ստեղծված Համառոտական և միջազգային բազմաթիվ մրցույթների դափնեկիր «Անի» համույթը դեռևս 80-ականներին մեկ անգամ եղել էր Հայաստանում, բայց խմբի անդամների մեծ մասն առաջին անգամ էր Հայաստանում, իսկ մեր կողմից դա առաջին հրավերն էր:

-Պարո՞ն Հովհաննիսյան, միայն համերգային ծրագրով սահմանափակվեց «Անի» համույթի այցելությունը Հայրենիք:

-Ո՛չ, մենք հնարավորություն ստեղծեցինք, որպեսզի մեր հյուրերը ծանոթանան Հայաստանի պատմամշակութային հուշարձաններից մի քանիսին. այցելեցինք Էջմիածին, Գեղարդ, Գռչավանք... Ցավոք, ժամանակը կարճ էր, և մեր հայրենակիցները շատ բան չհասցրեցին տեսնել: Նախապես համաձայնության գալով ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ պարոն Մերժ Սրապիտյանի հետ՝ մեր պատվիրակությունը՝ ԵՊՀ-ի ռեկտոր պարոն Միմոնյանի գլխավորությամբ, Մյասնիկյանի շրջանի ղեկավար Ա. Պորկշեյանը, վարչակազմի երկու ներկայացուցիչ, համույթի մենեջերներից և ես, հոկտեմբերի 31-ին հյուրընկալվեցինք մեր բարեկամ և գործընկեր ՀՀ սփյուռքի նախարարությունում, ուր շատ ջերմ ընդունելություն ցուցաբերեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը և, շատ բարձր գնահատելով խմբի աշխատանքը ազգային երաժշտության պահպանման և զարգացման գործում, «Անի» համույթին պարգևատրեց նախարարության պատվոգրով: Քննարկվեց նաև նախարարության կողմից հետագայում կազմակերպվելիք համահայկական երաժշտական փառատոներին «Անի» համույթի մասնակցությունը:

-Ի՞նչն էր առավել տպավորիչ՝ համույթի կատարումն րը, գործիքների ընտրությունը, տարագնե՞րը...

-Շատ լավ հարց էր տալիս. նախ ասեմ, որ հետաքրքիր էր հետևյալը՝ նրանց երգացանկում կային ազգային-ազգագրական մեզ հայտնի երգեր, կային նաև ազգային, ժողովրդական բնույթի, սակայն ռուսալեզու երգեր, իսկ ամենահետաքրքիրն ու տպավորիչը Չալոբրի բարբառով երգերն էին, հարսանական երգերի շարանը: Խմբի անդամների ճնշող մեծամասնությունը պատմական Անիից գաղթածների ժառանգներ են և պահպանել են բարբառը, որի մեջ կան նաև այլ լեզուներից վերցրած բառեր, որոնց համաձուլվածքն այսօրվա Չալոբրի բարբառն է՝ չիմացողի համար բավականին դժվար:

-Հայկական երաժշտական ի՞նչ նվագարաններ ունեն խումբը:

- Ձուռնայի մի քանի տեսակներ, դեմո, թառ, քանոն... Խմբում նվագում են նաև ակորդեոն, ջութակ, մի ներդաշնակ և գունագեղ համադրությամբ կազմավորված խումբ է «Անի»-ն, որի ելույթների ցանկում ընդգրկված են թե՛ հայրենասիրական, թե՛ սիրային երգեր ու կատակերգեր:

Ամենից կարևորն ու տպավորիչն այն է, որ խմբում ընդգծված էր հայկական ոգին ու շունչը, որ սերն առ Հայրենիք նրանց խոնավ աչքերում էր՝ բնավ չչափազանցված, անպատմելի, հուզումնառատ հրաժեշտի պահին:

